

**ԴԱՄԱԳՈՆԻ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՂԵԳԻ ԿԵՆՍԱԶԱՆԳԱԾԻ ՎՐԱ
ԵՎ ՆՐԱ ՎԵՐԱԿԱՆԿՆՈՒՄԸ ՔԻՄԻԱԿԱՆ ՄԵԼԻՈՐԱՑԻԱՅԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

Ա. Գ. ԱՀԱՐՈՆՅԱՆ, Ա. Մ. ԱՍԼԱՆՅԱՆ, Խ. Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ուսումնասիրվել է դալապոնով (դիբլորպորպիոնաթթվի նատրիումական աղ) ազոտ հոգևորում տարածված եղեգի կենսազանգվածի ոչնչացումը և նրա վերականգնումը քիմիական մեխորացիայի ժամանակ:

Բանալի բառեր. դալապոն, եղեգ, քիմիական մեխորացիա:

Հետազոտություններից պարզվել է, որ Արարատի, Արտաշատի, Մասիսի և Էջմիածնի շրջանների մելիորացվող հողերում ուժեղ տարածված է բազմամյա կոհարմատավոր մոլախոտ եղեգ սովորականը, որը քիմիական մելիորացման ժամանակ ավելի տարածվելով, խանգարում է մելիորացման աշխատանքներին և վնասակար է հատկապես հետազոտված մշակվող գյուղատնտեսական կուլտուրաների համար:

Ելույթ Լ. մերոյ: Ուսումնասիրությունները կատարվել են 1969—1974 թթ. րնթացքում: Յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի երկրորդ տասնօրյակում, 3-ական 1 մ² տարածության վրա, բուս: տարբերակների, եղեգի ցողունը հիմքից ննջվել և անմիջապես կտրվել է: Նույն մակերեսի վրա կատարվել է հողային փորումներ, անջատվել և կտրվել է եղեգի ստորգետնյա զանգվածը: 1969—1970 թթ. հետազոտություններից հետո, 1970 թ. հունիսին, ազոտ հողերի եղեգի վերգետնյա մասերը (բարձրությունը 15—30 սմ) սրսկվել են դալապոնի 30 կգ/հ հորմալով: Ինչպես դալապոն կիրառած, այնպես էլ չկիրառած տարբերակներում, երկու ամիս հետո, կատարվել է ազադեթում՝ 80% ծծմբական թթվով 80 տ/հ կամ երկաթարջասպով՝ 150 տ/հ: Ստուգիչ ծառակել է ուռղիյի ջրով (70 հազ. խմ) մշակված տարածությունը: Սկիորանտները հող են մտցվել ջրման ձևով:

Արդյունքներ և Բննարկում: Աղյուսակի տվյալներից երևում է, որ ազոտ հողամասում եղեգի վերգետնյա և ստորգետնյա թարմ զանգվածը 1969 թ. սեպտեմբերին աննշան է, իսկ 1970 թ. աշխինը՝ դալապոնի սրսկման ժամանակ, որոշ չափով սվելացել է: 1970 թ. հունիսին, դալապոնով մշակելուց հետո, նույն տարվա աշնանը նորմալ ցողուններ չեն մնացել, սակայն հողի վարելահերտում նրա ստորգետնյա զանգվածը որոշ չափով պահպանվել է (15 գ/րմ վրա): Դալապոնի օգտագործումից 1 և 2 տարի հետո (1971 և 1972 թթ.) եղեգը տվել է նոր վերած: Նրա վերգետնյա ու ստորգետնյա թարմ զանգվածի նվազումը ստուգիչի համեմատությամբ, ըստ տարիների, կազմել է 92, 98 և 72, 73%:

1972 թ. սեպտեմբերից տարբեր հողամասերում սկսվեցին մելիորացման աշխատանքները՝ ծծմբական թթվի 80% լուծույթի, երկաթարջասպի և ջրի օգնությամբ: Մելիորանտները հող ներմուծելուց մեկ տարի հետո, 1973 թ. սեպտեմբերին պարզվեց, որ ծծմբական թթվով ազադեթման շնորհիվ եղեգի

Մելիորանաների ազդեցությունը եղեգի կենսազանգվածի վրա և նրա ունեցումը
դալապոնով աղուտների քիմիական մեխորացման ընթացքում

Տարի	Տ ա ր բ ե ր ա կ		Թարմ դանգվածը			
	Հողատեսք	Հերքիցիդ կգ հ	վերգետնյա 100 × 100 սմ		ստորգետնյա 100 × 100 × 30 սմ	
			գ	%	գ	%
1969	աղուտ	ստուգիչ փորձնական	15 16	— —	58 58	— —
1970	աղուտ	ստուգիչ 1970 թ. հունիս դալապոն 30	22 0	— 100	96 15	— 84
1971	աղուտ	ստուգիչ 1970 թ. հունիս դալապոն 30	80 6	— 92	120 33	— 72
1972	աղուտ	ստուգիչ 1970 թ. հունիս դալապոն 30	85 10	— 88	150 40	— 73
1973	աղուտ	ստուգիչ 1970 թ. հունիս դալապոն 30	80 12	— 85	135 50	— 63
	աղազերծված ծծմբական թթվով	ստուգիչ 1970 թ. հունիս դալապոն 30	2190 61	— 97	350 85	— 76
	երկաթարջասպով	ստուգիչ 1970 թ. հունիս դալապոն 30	2260 270	— 88	410 196	— 52
1974	ջրով	ստուգիչ 1970 թ. հունիս դալապոն 30	2230 87	— 96	345 93	— 73
	աղուտ	ստուգիչ 1970 թ. հունիս դալապոն 30	74 17	— 77	60 30	— 50
	աղազերծված ծծմբական թթվով	ստուգիչ 1970 թ. հունիս դալապոն 30	4713 90	— 98	460 115	— 75
	երկաթարջասպով	ստուգիչ 1970 թ. հունիս դալապոն 30	5125 800	— 84	975 440	— 55
	ջրով	ստուգիչ 1970 թ. հունիս դալապոն 30	2590 170	— 91	600 190	— 68

վերգետնյա դանգվածը ավելացել է ավելի քան 27 անգամ, այսինքն՝ 1 քմ վրա 80-ից հասել է 2190 գ-ի, երկաթարջասպով՝ 28 անգամ, 80-ից հասել է 2260 գ, իսկ ջրով՝ գրեթե նույն պատկերն է ստացվել, ինչ որ երկաթարջասպով: Եղեգի ստորգետնյա դանգվածը համապատասխանաբար աճել է՝ ծծմբական թթվի տարբերակում՝ 2,5 անգամ, երկաթարջասպի տարբերակում՝ 3 անգամ, ջրի տարբերակում՝ 2,5 անգամ:

Այժմ տեսնենք, թե ինչ արդյունք է ստացվել, երբ մելիորացումից առաջ եղեգի վերգետնյա կանաչ դանգվածը 1970 թ. հունիսին սրսկվել է դալապոնով: Դալապոն կիրառված դաշտում ամենուրեք եղեգի ստորգետնյա և վերգետնյա դանգվածի վերականգնումը շատ դանդաղ է ընթացել: Այսպես, օրի-

նակ, 80% ծծմբական թթու օգտագործված դաշտում, ստուգիչի համեմատությամբ (դալապոն չօգտագործված) վերգետնյա զանգվածի նվազումը կազմել է 97%, իսկ ստորգետնյան՝ 76%, երկաթարջասպով աղաղերծված դաշտում՝ 88 և 52%, իսկ ջուր տրված դաշտում՝ 96 և 73%:

1974 թ. սեպտեմբերին, մելիորանտները հող ներմուծելուց 2 տարի անց, այդ թվում՝ դալապոնի սրսկումից 4 տարի հետո, եղեգի վերականգնումը դանդաղ է ընթացել՝ եղեգի դեմ դալապոն սրսկված և հետագայում ծծմբական թթվով ու ջրով մելիորացված դաշտերում: Երկաթարջասպով մելիորացված դաշտի եղեգի վերականգնումը արագ է ընթացել, այսինքն՝ ստուգիչի համեմատությամբ նվազումը կազմել է 84 և 55%: Ինչպես տեսնում ենք, 1973 և 1974 թթ. երկաթարջասպով մելիորացման ղեկքում, դալապոնով եղեգի դեմ սրսկված տարբերակում եղեգի վերգետնյա և ստորգետնյա զանգվածը մի բանի անդամ ավելի է, քան ծծմբական թթվով և ջրով տարբերակում: Դա նշանակում է, որ երկաթարջասպը նպաստում է եղեգի վերականգնմանը, աճմանը և դարպացմանը, անկախ այն բանից, որ եղեգը սրսկվել է դալապոնով: Հավանաբար եղեգի աճմանը նպաստում է երկաթը (Fe):

Աղյուսակից ակնհայտ է նաև շատ կարևոր հանգամանք. աղուտ հողում եղեգի վերգետնյա և ստորգետնյա զանգվածն աննշան է: Երբ տվյալ դաշտում կատարվում է քիմիական կամ ոչ քիմիական մելիորացիա, այն անմիջապես նպաստում է եղեգի աճմանը, դարպացմանը և տարածմանը ստորգետնյա օրգաններով ու սերմերով:

Պարզ է, որ մելիորացված դաշտում (երբ կուլտուրական բույսերի համար մնասակար աղերի բանակը հասնում է մինիմումի) ցանվում են գլուղատնտեսական կուլտուրաներ: Ուստի այդ կուլտուրաները պետք է ցանել այնպիսի դաշտում, ուր մեծ տարածում ունի եղեգ սովորականը, որի ստորգետնյա օրգանները թափանցում են մինչև 3 մ և սնվում ստորգետնյա ջրերից:

Այսպիսով, Արարատյան դաշտավայրի եղեգով աղբոսված աղուտ հողերի մելիորացման ընթացքում եղեգն իր վերգետնյա և ստորգետնյա օրգաններով խիստ տարածվում է: Մելիորացման աշխատանքները նպաստում են նրա աճմանն ու դարպացմանը՝ հատկապես երկաթարջասպի օգտագործման ղեկքում: Եղեգը պետք է ոչնչացնել ինչպես տվյալ հողամասի մելիորացումից առաջ, այնպես էլ մելիորացման ընթացքում: Այս կարևոր հանգամանքը անհրաժեշտ է հաշվի առնել եղեգով աղբոսված աղուտ և ոչ աղուտ հողերի մելիորացման ժամանակ:

Բույսերի պաշտպանության
գիտա հետազոտական ինստիտուտ

Ստացված է 4. V. 1979 թ

ВЛИЯНИЕ ДАЛАПОНА НА БИОМАССУ ТРОСТНИКА И ЕЕ ВОССТАНОВЛЕНИЕ ПРИ ХИМИЧЕСКОЙ МЕЛИОРАЦИИ

А. Г. АГАРОПЯН, А. М. АСЛАНЯН, Х. А. ГЕВОРКЯН

Было изучено влияние далапона (натриевая соль дихлорпропионо-
вой кислоты) на биомассу тростника обыкновенного на засоленных поч-
вах и ее восстановление при химической мелиорации этих почв при по-

мощи жидкого мелноранта—серной кислоты и сыпучего—железного купороса. Далапон, применяемый в дозе 30 кг/га, полностью уничтожал надземную массу тростника.

После уничтожения тростника проводилась мелнорация указанными мелнорантами с целью нейтрализации вредных солей (хлоридных и содовых сульфатов). Выяснилось, что процесс мелнорации влиял положительно на биомассу тростника обыкновенного, особенно при расселении железным купоросом (биомасса тростника увеличивалась в 28 раз).

Возможно, что элемент Fe^{+} способствует росту и развитию тростника, при применении перед мелнорацией далапона биомасса тростника восстанавливается очень медленно независимо от мелноранта и способа мелнорации.

THE INFLUENCE OF DALAPON ON REED BIOMASS AND ITS RENEWAL UNDER CHEMICAL LAND-RECIAMATION

A. G. AHARONIAN, A. S. ASLANIAN, Kh. A. GEVORKIAN

The destruction of reed biomass and its renewal under the influence of dalapon in chemical land-reclamation by means of liquid reclamator-sulphuric acid and dry—green vitriol has been studied.